



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

14 փետրվարի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝	Ա. Գյուլումյանի
Անդամակցությամբ՝	Ա. Խաչատրյանի
	Հ. Նազարյանի

Քննության առնելով «ԱՐՁՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց .

1. «ԱՐՁՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020 թվականի հունվարի 29-ին)՝ խնդրելով. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ

մասը և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 73-րդ և 75-րդ հոդվածներին հակասող և անվավեր՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները:

2. Դիմողը իր դիմումում առանձնացնում է երկու հայեցակարգային դրույթ. առաջին՝ անձի սնանկ ճանաչված լինելու հանգամանքը դատարան դիմելու իրավունքի սահմանափակման հիմք չէ, երկրորդ՝ սնանկ ճանաչված անձը օժտված է դատավարական իրավասություններով, և վերջինիս դատական պաշտպանության իրավունքի իրացումը չպետք է կապվի այլ սուբյեկտի՝ սնանկության գործով կառավարչի հետ:

Դիմողը վիճարկվող իրավական նորմերի վերլուծության արդյունքում եկել է եզրակացության, որ սնանկության կառավարիչը ներկայացնում է սնանկ ճանաչված անձի շահերը բացառապես օրենքով նախատեսված դեպքերում: Քննարկվող օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասում թեև նշված է սնանկության կառավարչի՝ օրենքով նախատեսված դեպքերում պարտապանի շահերը ներկայացնելու իրավունք, սակայն հստակեցված չեն այն իրավիճակները, որոնց պայմաններում վերջինս պետք է օգտվի նման իրավական կարգավորումից: Մասնավորապես, օրենքով հստակ և սպառիչ կերպով սահմանված չեն այն դեպքերը որոնց պարագայում կիրառելի է նշված նորմը, ինչը դրույթն առավել քան խոցելի է դարձնում իրավական որոշակիության տեսանկյունից:

Դիմողը նշում է, որ իր գործով քաղաքացիական վերաքննիչ դատարանն, ըստ էության, հանգել է այն եզրակացության, որ սնանկ ճանաչված ընկերությունը չունի դատավարական իրավասություններ, չի կարող հայց ներկայացնել դատարան, և միայն սնանկության գործով կառավարիչն է օժտված նման դատավարական իրավասություններով: Սակայն դիմողը համոզված է, որ սնանկության կառավարչի որպես ներկայացուցիչ հանդես գալու իրավունքը, դեռևս չի նշանակում, որ

ընկերությունն ի դեմս իր տնօրենի գրկված է դատարան դիմելու իրավական հնարավորությունից:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ ըստ էության սահմանափակվել է սնանկ ճանաչված անձի և սնանկության գործով կառավարչի դատավարական իրավասուբյեկտությունը: Մի կողմից՝ սնանկ ճանաչված անձը ինքնուրույն չի կարող օգտվել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից, մյուս կողմից՝ սնանկության գործով կառավարիչը կարող է հանդես գալ բացառապես սնանկ ճանաչված անձի անունից, այսինքն՝ ըստ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի՝ վերջինս չունի դատավարական ինքնուրույն իրավասուբյեկտություն:

Դիմողի համոզմամբ՝ սնանկ ճանաչված անձը և սնանկության գործով կառավարիչը ինքնուրույն դատավարական սուբյեկտներ են՝ օժտված դատական պաշտպանության, արդար դատաքննության սահմանադրական իրավունքներով, և իրավակիրառ պրակտիկայում ձևավորված այն մոտեցումը, ըստ որի՝ դատավարական առումով նույնացվում են պարտապանը և սնանկության կառավարիչը, չի ապահովում այդ իրավունքների իրականացումը:

Ըստ դիմողի՝ կառավարչի՝ որպես սնանկության գործերով հատուկ սուբյեկտի կողմից դատավարական գործողությունների, այդ թվում հայցադիմումի ներկայացման և որպես հայցվոր հանդես գալու պարագայում շահագրգռվածությունը պետք է դիտարկել իր պարտականությունների կատարման տեսանկյունից:

3. Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ առկա չեն սույն դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են Սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ Սահմանադրական դատարանի որոշում,

- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում չի իրականացվում գործի դատաքննություն,

- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները և պահպանել Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածով և 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «ԱՐՁՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել Ազգային ժողովին:

Նախագահող՝
Անդամներ՝



14 փետրվարի 2020 թվականի
ՍԴԴԿՈ-8